

## ԿԱՐԾԻՔ

Մեխնե Արծրունի Գրիգորյանի՝ «Ներառական կրթության կառավարման առանձնահատկությունները ՀՀ հիմնական դպրոցում» վերնագրով, «մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ, ԺԳ.00.01. թվանիշով, մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում, կրթության համակարգի ձևափոխումները, երեխայի կրթություն ստանալու անհրաժեշտությունն ու սահմանադրական իրավունքը նոր շեշտադրումներ են կատարում ներառական կրթության համակարգում, նպատակ ունենալով ստեղծել, մշակել ու կատարելագործել կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին կրթելու և դաստիարակելու ուղիները:

Նշանակում է ներառական կրթության կառավարման առանձնահատկությունների, կրթության ուսուցման ու դաստիարակության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարողությունների, ունակությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման արդյունավետ մեթոդների, միջոցների ու մանկավարժական պայմանների ուսումնասիրումն ու փորձագիտական մշակումը ատենախոսի կողմից նպաստելու են ներառական կրթության արդյունավետության բարձրացմանը և այդ միջավայրում կրթություն ստացող աշակերտի սոցիալական անձի դաստիարակությանը, ձևավորմանը և զարգացմանը:

Իր հինախնդրին արդյունավետ լուծում տալու համար ատենախոսն իր առաջ նպատակ է դրել ՀՀ հիմնական դպրոցներում ուսումնասիրել ներառական կրթության կառավարման առանձնահատկությունները և մշակել դրանց կատարելագործման տեսական և գործնական ուղիները՝ ուսումնասիրելով ներառական կրթության կառավարման ժամանակակից մոտեցումները, վերլուծելով ՀՀ-ում կիրառական կրթության կառավարման դրվածքը և մշակելով ներառական կրթության կառավարման բարելավման տեսական ու գործնական ուղիները:

Դրանք ատենախոսը ներկայացնում է իրար լրացնող և միմյանց օրգանական շարունակություն կազմող երեք խումբ հարցերի միջոցով: Դրանք են.

- Հինախնդրի դրվածքը, հետազոտության խնդիրները, մեթոդներն ու կազմակերպումը:

- ՀՀ հիմնական դպրոցներում ներառական կրթության կառավարման դրվածքի ուսումնասիրումը:
- Ներառական կրթության կառավարման բարելավման տեսական մոտեցումները և գործնական ուղիները:

Բարեխղճորեն շարադրելով աշխատանքը մեկ առ մեկ հիմնավորում է.

- Ներառական կրթություն հասկացությունը, էությունը և բնութագրումը:
- Ներառական կրթության կառավարման հիմնախնդիրները:
- Հետազոտության հիմնական ուղղությունները և անցկացման փուլերը:
- Ներառական կրթության կառավարման օրենսդրական և իրավական կարգավորումները:
- ՀՀ հիմնական դպրոցում ներառական կրթության կառավարման դրվածքի վերլուծությունը:
- Ներառական կրթության կառավարման վերաբերյալ մանկավարժների իրազեկվածության մակարդակի ուսումնասիրումը:
- Հիմնական դպրոցում ներառական կրթության կառավարման բարելավման անհրաժեշտության տեսական կողմը և այլն:

Սրանց գիտական ներկայացումն էլ լրացվում է.

- Ներառական կրթության բնութագրով, վեց կետերից կազմված կառավարման առանձնահատկություններով, ոչ թե միանմանության, այլ բազմազանության սկզբունքով, յուրաքանչյուր աշակերտի առանձնահատկություններից բխող կարիքների բավարարմամբ, ուսումնական գործընթացին աշակերտների լիարժեք մասնակցությունը խոչընդոտող գործոնների բացահայտմամբ ու չեզոքացմամբ, ներառական կրթության կառավարման խորքային ու երկարաժամկետ փոփոխություններով:
- Առարկայական ուսուցիչների և հատուկ մանկավարժների փոխգործունեության կառավարումն իրականացվող երեք ուղղությունների՝ ուսումնական գործընթացում աշակերտների, շփումների, նրանց պարապմունքների ու սոցիալականացման և զարգացման հապաղում ունեցող աշակերտների և նրանց ծնողների միջև կապերի գիտական, դիդակտիկական և սոցիալական վերլուծություններով:
- Ներառական կրթության կառավարման աշխատանքների դրվածքի, գնահատման, ներառական կրթության և ներառական կրթության կառավարման հար-

ցերի վերաբերյալ հարցվողների իրազեկվածության մակարդակի ներառական կրթության կառավարման հիմնախնդրի վերաբերյալ հարցվողների վերաբերմունքի, ներառական կրթության կառավարման հարցերի շուրջ հարցվողների տեսական գիտելիքների և գործնական կարողությունների գնահատման և սոցիոլոգիական հարցման ցուցանիշներով:

- **Ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցի և ներառական կրթության կառավարումն** իրականացնող օրինակելի մոդելով:

Այս հարցերը ատենախոսը ներկայացնում է իր կողմից հմտորեն կառուցված գծապատկերների, աղյուսակների ու հավելվածների տեսքով:

Ներկայացված փաստերն ու տվյալները, նաև դրանց վերլուծություններն այնքան գիտական են ու հավաստի, որ ապացուցում են, որ գործ ունենք փորձառու և հետազոտող, արդեն գիտության ճիշտ ճանապարհի վրա կանգնած, իր գործի գիտակ մասնագետ գիտնականի հետ:

Մեր դրական կարծիքն ատենախոսի և նրա գիտական հետազոտության մասին էլ ավելի է հիմնավորվում, երբ առնչվում ենք ատենախոսության գիտական ապարատի հետ:

Նման ներդաշնակ կառուցվածք ունեցող գիտական ապարատ ինձ հազվադեպ է պատահում: Եվ հաջողներից մեկն էլ հենց այս գրախոսվող աշխատանքն է:

- ատենախոսության գիտական ապարատի բոլոր բաղադրատարրերն իրենց տեղում են,
- հետազոտության խնդիրները՝ 3, գիտական վարկածը՝ 4, գիտական նորույթը՝ 3, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները՝ 2, եզրակացությունը՝ 5 կետերը ներդաշնակ են:

Այդ պարզ պատճառով էլ.

- Թեմայի ընտրությունը գիտականորեն հիմնավորված է,
- խնդիրները ամբողջովին բխեցված է նպատակից,
- բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության թեմային,
- մեթոդների ընտրությունը խիստ արդյունավետ է,
- եզրակացությունները համապատասխանում են խնդիրներին,
- շարադրանքը համապատասխանում է ատենախոսության կառուցվածքին,
- աղբյուրների ընտրությունը հրատարակչության, տարեթվերի, գրականության էջերի կատարյալ է:

Այդ ամենը վկայում է այն մասին, որ ատենախոսն ունի բոլոր սվյալները ոչ միայն գիտական հետազոտություն ներկայացնելու, այլև խորությամբ վերլուծելու ուղղությամբ:

Ատենախոսության մասին մեր հիմնավոր դրական կարծիքով այն կարող էինք ամփոփել, եթե այդ բանիմաց ատենախոսը մի քանի վրիպումներ թույլ տված չլիներ:

Նա.

- Ատենախոսության այդքան բովանդակալից ու գիտականորեն շարադրված գլուխներում համարյա չեն հիշվում խոսքային, հուզական, տեսողական, լսողական խանգարումներ, ուսման մեջ դժվարություններ, մտավոր ու ֆիզիկական հապաղումներ ունեցող աշակերտի հետ սովորող, իրենց դասարանում ու կողքի նստարանին նստած առողջ աշակերտների մասին, քանի որ նաև նրանց վերաբերմունքից է կախված սովորական ուսումնական գործընթաց ներառված երեխաների ուսման մեջ ունեցած առաջընթացը և անձի ձևավորումը:
- Օգտագործված գրական ու գիտական աղբյուրների այդքան լավ ընտրված ու հարուստ ցանկում.
  - չկան թվով այն 24 աղբյուրները, որոնք հղված են շարադրանքում և լինելու դեպքում էլ ավելի կհարստացնեին ցանկը,
  - 173 անուն ցանկից շարադրանքում հղված են աղբյուրների կեսից մի փոքր ավելը՝ 91-ը, որոնք լրիվ հղելու դեպքում կբարձրացնեին շարադրանքի բովանդակության որակը,
  - 26 աղբյուրներ հին, մինչև 2000թ. լույս տեսած, որոնք եթե չլինեին անգամ, շարադրանքի գիտական կողմը չէր տուժի, իսկ գրական և գիտական աղբյուրների պակաս ցանկում չէր զգացվի:
- Ներածությունում բաց են մնացել «հետազոտության մշակվածության աստիճանը» և «աշխատանքի կատարման փուլերը», որոնց բացակայությունը թուլացնում է «հետազոտության գիտական ապարատը»:

Իհարկե, մեր դիտողություններին պատասխանելիս ատենախոսը պետք է ցույց տա, որ «աշխատանքի կատարման փուլերը» մեթոդների հետ սորված են ատենախոսության առաջին գլխի 1.4. ենթագլխում համապատասխանաբար 43, 44, 45, 46, 47 էջերում:

Ճիշտ է, բայց մեր խոսքը վերաբերվում է «հետազոտության գիտական ապարատի» կառուցվածքին, այլ ոչ թե թեմայի գլուխների ու ենթագլուխների շարադրանքին:

- Կան տեխնիկական չնչին վրիպումներ, որոնք ուշադրության դեպքում կարող էին չլինել:

Ասենք ատենախոսության «Ներածականում» գրված է՝ «ատենախոսության տեքստը պարունակում է 3 աղյուսակ, բայց շարադրանքում 2-ն են, 4 հավելված, բայց 3-ն են և այլն»:

Ինչևէ, վերը նշվածները ինչ-որ բան հուշող թերություններ են, բայց գոնե չեն ազդում աշխատանքի ունեցած գիտական բարձր մակարդակի վրա:

Դա նշանակում է, որ ձեռքի տակ եղած ու մանրակրկիտ ուսումնասիրված «Ներածական կրթության կառավարման առանձնահատկությունները ՀՀ հիմնական դպրոցում» վերնագրով աշխատանքը բարձրակարգ արժեք ունեցող, ինքնուրույն, ավարտուն, իր տեսակի մեջ ինքնատիպ, տեսական և գործնական նշանակությամբ ատենախոսություն է, որն ամբողջովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշտրինման կանոնակարգի համապատասխան կետի՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հետազոտության հեղինակը՝ Մելինե Արծրունի Գրիգորյանն արժանի իր կողմից հայրցված «մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ և ԺԳ.00.01 թվանիշով մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս,  
ՀՀ վաստակավոր մանկավարժ,  
Մանկավարժական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր՝

Մնացական Մանուկյան

Պրոֆեսոր Մնացական Մանուկյանի ստորագրությունը  
հաստատում էմ ՀՊՍՀ գիտական քարտուղար, դոցենտ  
Մարիամ Իսախրյան

01.12.2022

ք. Երևան